

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Սեպտեմբերի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է ցածր 1-3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են սեպտեմբերի 24-ին, 30-ին. Տավուշում գրանցվել է +23..+25^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +21...+23^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +28...+30^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +24...+27^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +20...+24^{0}C, Շիրակում՝ +20...+25^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +20...+24^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +24...+26^{0}C, Գեղարքունիքում՝ +19...+23^{0}C, Լոռիում՝ +21...+24^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +29...+31^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +20...22^{0}C, նախալեռներում՝ +23...+25^{0}C (Աշտարակ՝ +30^{0}C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 23-ին, 24-ին. Շիրակում գրանցվել է +1...+3^{0}C, (Աշոցք՝ -4^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -2...+3^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +5...+7^{0}C, Տավուշում +7...+9^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0...-2^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +3...+5^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +7...+9^{0}C, նախալեռնային շրջաններում՝ -1...+4^{0}C, Գեղարքունիքում՝ 0...+5^{0}C (Գավառ՝ -1^{0}C), Լոռիում՝ +1...+5^{0}C (Տաշիր՝ -0.8) Արմավիրում՝ +5...+8^{0}C, Արարատում՝ +5...+7^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 0...-2^{0}C, նախալեռներում՝ +3...+7^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Լոռիում կազմել է 1-13մմ (6-68%), Շիրակում տեղումներ դիտվել են միայն Աշոցքում 1մմ (13%), Տավուշում՝ 3-4մմ (18-31%), Գեղարքունիքում՝ 0,2-15մմ (1-115%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 0.2...0.3մմ (1-2%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 0.1-2մմ (1-13%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0.3մմ (2%), Արմավիրում՝ 0.2մմ (3%), Արարատում տեղումներ դիտվել են միայն Ուրցաձորում՝ 0.3մմ (3%), Սյունիքի հովտային շրջաններում՝ Մեղրի 22մմ (367%), նախալեռներում՝ 5-24մմ (50-114%): Արագածոտնի, Կոտայքի, Վայոց ձորի նախալեռնային շրջաններում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են սեպտեմբերի 23-25-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային շրջաններում՝ 0...-5^{0}C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ +2....+6^{0}C:



Մշակաբույսերի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի խոնավության պաշարները լեռնային շրջաններում 20սմ խորության վրա կազմել են 10-25%, նախալեռնային շրջաններում՝ 15-35%, հովտային շրջաններում՝ 20-39%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-30%, նախալեռնային շրջաններում՝ 20-35%, հովտային շրջաններում՝ 20-40%:



Ելնելով Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) պաշտոնական կայք էջում տեղադրված բուսականության սթերեսի քարտեզից՝ սեպտեմբերի երրորդ տասնօրյակում հանրապետության ողջ տարածքում սթրեսի բարձր ցուցանիշ չի գրանցվել: Բուսականությունը գտնվում էր լավ և բավարար վիճակում:

Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Հովտային շրջաններում կատարվել է պտղատուների, բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի, ընկույզի բերքակավաք:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է աշնանացան ցորենի նախացանքի և ցանքի աշխատանքները, կատարվել է պտղատուների բերքահավաք:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը կտցել է, տեղ-տեղ՝ ծլել, շարունակվել է հնդավորների, կարտոֆիլի և կաղամբի բերքահավաքը:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել դաշտային աշխատանքներն իրականացնելու և բերքահավաքի համար:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ